Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի
2009 թվականի ապրիլի 10-ի թիվ 33-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2008 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2009թ.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2008 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2008 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը: Հանձնաժողովը 2008 թվականին շարունակել է աշխատանքներն՝ ուղղված ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների կանխմանը և արգելմանը, սպառողների շահերի պաշտպանությանը և ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելուն, Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովմանը, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը և Օրենքի ու Հանձնաժողովի կողմից ընդունվող իրավական ակտերի (կարգերի) կատարելագործմանը:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Աշխատանքները տարվել են տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, մրցակցային միջավայրի կարգավորման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությամբ և նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաներում դիտանցմամբ: Այսպես, Հանձնաժողովը 2008 թվականին ուսումնասիրել է 29 ապրանքային շուկա, և դիտանցում է իրականացրել 102 ապրանքային շուկաներում, որոնցում գործում են Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում գրանցված 77 տնտեսվարող սուբյեկտներ: Բացահայտվել են գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների կնքման մի շարք դեպքեր, որոնք արտահայտվել են տնտեսապես չհիմնավորված գնի բարձրացմամբ կամ դրանց բարձր մակարդակի պահպանմամբ: Ընդհանուր առմամբ, Հանձնաժողովն անդրադարձել է մոտ 20 ապրանքային շուկաներում ապրանքների իրացման գների կիրառման քաղաքականությանը:

Ապրանքային շուկաների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գերազանցապես տեղական արտադրության հաշվին գործող շուկաներից հինգը բարձր կենտրոնացված են և մեկ շուկան միջին կենտրոնացված է: Հինգ ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Գերազանցապես ներմուծման հաշվին գործող շուկաներում միայն մեկ շուկան է ցածր կենտրոնացված, 14 ապրանքային շուկաներ միջին կենտրոնացված են, 8-ը՝ բարձր կենտրոնացված:

Նշված 23 ապրանքային շուկաներից 14-ում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Միաժամանակ, 9 ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ չկան:

Ինչ վերաբերում է ուսումնասիրված ապրանքային շուկաների մասնակիցների թվին, ապա ապրանքային շուկաներում իրավիճակը հետևյալն է. գերազանցապես տեղական արտադրության հաշվին գործող վեց շուկաներում գործում են 170 տնտեսվարող սուբյեկտներ, ընդ որում՝ մասնակիցների նվազագույն թիվը «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում է՝ 14 տնտեսվարող սուբյեկտ, իսկ առավելագույն թիվը «Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ» ապրանքային շուկայում է՝ 74 տնտեսվարող սուբյեկտ: Գերազանցապես ներմուծման հաշվին գործող 23 ապրանքային շուկաներում առկա են 556 տնտեսվարող սուբյեկտներ, ընդ որում՝ մասնակիցների նվազագույն թիվը «Մանկական հյութեր» ապրանքային շուկայում է՝ 3, իսկ առավելագույնը՝ «Հեռուստացույցներ» ապրանքային շուկայում. 67:

Հանձնաժողովը 2008 թվականին գումարել է 36 նիստ և ընդունել 127 որոշում, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվությունը չներկայացնելու համար պատասխանատվություն սահմանող 10 որոշում, ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար պատասխանատվություն սահմանող 1 որոշում, անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող 8 որոշում, հակամրցակցային համաձայնության համար պատասխանատվություն սահմանող 1 որոշում, գերիշխող դիրքի չարաշահման համար պատասխանատվություն սահմանող 2 որոշում: 2008 թվականին Հանձնաժողովի կողմից ընդունված տուգանք սահմանող 14 որոշումների հիման վրա տնտեսվարող սուբյեկտներից գանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 327 915 380 դրամ, որից պետական բյուջե է գանձվել 105 682 379 դրամ (այդ թվում նաև՝ Հանձնաժողովի նախորդ տարիների որոշումների հիման վրա), որից դատական կարգով՝ 103 982 379 դրամ: ՀՀ դատարաններ ներկայացված 20 հայցադիմումներով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 326 365 380 դրամ, որոնցից 7-ը՝ 323 115 380 դրամ ընդհանուր գումարով գտնվում են ՀՀ դատարանների վարույթներում, 13-ը՝ 3 250 000 դրամ ընդհանուր գումարով բավարարվել են: ՀՀ վարչական դատարանի կողմից բավարարված հայցերի հիման վրա տրվել է 11 կատարողական թերթ՝ 2 750 000 դրամ ընդհանուր գումարային պահանջով, որոնք ներկայացվել են հարկադիր կատարման, իսկ 2-ը՝ 500 000 դրամ ընդհանուր գումարով, կներկայացվի կատարողական թերթերը տրամադրվելուց հետո:

Գերիշխող դիրքի չարաշահման համար պատասխանատվություն սահմանող որոշումներից մեկը վերաբերում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի վարքագծին: «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հրաժարվել է իր ենթակառուցվածքը վարձակալությամբ տրամադրել ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող մյուս ընկերություններին և ցանցի օպերատորներին, ինչի արդյունքում վերջիններս զրկվել են իրենց հաճախորդներին որակյալ ծառայություններ մատուցելու հնարավորությունից: Մյուս դեպքում, պատասխանատվության միջոց է կիրառվել «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի նկատմամբ՝ ազոտական պարարտանյութի իրացման չհիմնավորված և խտրական գներ կիրառելու համար: Երկու

տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ էլ նշանակվել է տուգանք՝ գերիշխող դիրքը չարաշահելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից շարունակական դիտանցում է իրականացվել 20-30 կարևորագույն ապրանքատեսակների իրացման գների նկատմամբ, որի արդյունքում բնակչության սպառման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող սննդամթերքի գները, ի տարբերություն նախորդ տարիների, էապես չբարձրացան:

Իրականացված հետազոտությունների արդյունքում բացահայտվել են անբարեխիղճ մրցակցության մի շարք դեպքեր՝ քաղցրավենիքի, հանքային ջրերի, ածիկի, սանիտարահիգիենիկ թղթի շուկաներում ու մի շարք ծառայությունների ոլորտներում: Հանձնաժողովի որոշմամբ խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նշանակվել է տուգանք և հանձնարարվել է դադարեցնել անբարեխիղճ մրցակցությունը ու հետագայում բացառել այն:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ հաշվետու տարում ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների գործունեության փաստաթղթավորման հստակեցման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ, ինչը որոշ չափով նպաստել է ստվերային շրջանառության ծավալների կրճատմանը:

2008 թվականի ընթացքում կատարվել են լրացումներ և փոփոխություններ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա Հանձնաժողովի կողմից իրականացվել են ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ: Մասնավորապես, մշակվել և պետական գրանցման է ներկայացվել 4 ակտ:

2008 թվականի ընթացքում Հանձնաժողովը ստացել է շուրջ 5900 (մտից) գրություն, Հանձնաժողովից առաքվել է շուրջ 2850 (ելից) գրություն:

Հանձնաժողովի աշխատակազմում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ. ստեղծվել է վերահսկողության վարչություն, որի գործառույթները բխում են Օրենքում Հանձնաժողովի լիազորությունների և գործառույթների ընդլայնումից: Ստեղծված վարչությունը, ի թիվս այլ գործառույթների, ապահովում է օրենքի խախտման փաստերի քննարկման կապակցությամբ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման հիման վրա տնտեսվարող սուբյեկտների ներկայացրած փաստաթղթերի և այլ տեղեկատվության հավաստիության պարզման նպատակով, ըստ անհրաժեշտության, թեմատիկ ստուգումների իրականացումը:

Հաշվետու տարում, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ատեստավորվել է 8 և վերապատրաստվել՝ 15 քաղաքացիական ծառայող:

2008 թվականին Հանձնաժողովը շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից հրատարակվել է 2 պաշտոնական տեղեկագիր: Հանձնաժողովը 2008 թվականին հաստատել և

ընդլայնել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների հետ:

ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել և հրապարակվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2009 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հանձնաժողովը 2008 թվականի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացրել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերաձևման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների լուծարման փաստը:

2008 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք պարենային ապրանքային շուկաների իրացման ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը և իրացման ծավալներով առաջին երեք տեղերը զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտները (2007 թվականի և 2008 թվականի առաջին կիսամյակի տվյալներով)

Աղյուսակ 1

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Ապրանքային շուկայի իրացման ծավալը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը	Ապրանքային շուկայում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ (ներ)ի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը
					անվանումը	բաժինը (%)	
1	2	3	4	5	6	7	8
1.	«Հավի ձու՝ կճեպով»	հատ	206648252.0	85.92	«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ*	42.49	12
					«Արզնու տոհմային ԹՏՖ» ԲԲԸ	29.72	
					«Երևանի թռնչաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ	13.71	
2.	«Թառափազգիներ»	կգ	148383.0	81.77	«Ա.Հովհաննիսյան» ՍՊԸ*	38.77	18
					«Արքուր Տաքնիկ» ՍՊԸ*	33.36	
					«Ձկների աշխարհ» ՍՊԸ	9.64	
3.	«Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ»	կգ	640826.0	45.5	«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ	18.98	74
					«Ա.Հովհաննիսյան» ՍՊԸ	16.93	
					«Սպիտակ դելֆին» ՍՊԸ	9.59	
4.	«Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ»	լ	3120410.5	70.34	«Աշտարակ կաթ» ՓԲԸ*	57.03	34
					«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	9.01	
					«Եղվարդ համալիր» ՍՊԸ	4.30	
5.	«Թթվասեր»	կգ	1454227.9	84.66	«Աշտարակ կաթ» ՓԲԸ*	59.16	18
					«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	17.05	
					«Թամարա» ՍՊԸ	8.45	
6.	«Պաղպաղակ	կգ	2310332.2	78.19	«Շանթ Պլյուս» ՍՊԸ**	30.73	14
					«Աշտարակ կաթ» ՓԲԸ**	25.82	
					«Թամարա» ՍՊԸ	21.64	
7.	«Բրինձ»	կգ	11678064.0	66.6	«Կարի Թով» ՍՊԸ**	32.0	19
					«Մոկոնաթ» ՍՊԸ**	27.6	
					«Ջի Էմ Վի Շատլ» ՍՊԸ	7.0	
8.	«Սառեցված ձկներ»	կգ	366552.9	72.36	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ*	46.55	11
					«Մոկոնաթ» ՍՊԸ	13.26	
					«Ֆելիքս Սարգ» ՍՊԸ	12.55	
9.	«Մանկական հյութեր»	կգ	3643.5	100	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ*	60.6	3
					«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	36.6	
					«Սլավ ֆուդ ինտերնեյշնլ» ՓԲԸ	2.7	
10.	«Մանկական խյուսեր (պյուրեներ)»	կգ	17770.3	98.23	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	68.35	4
					«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	27.88	
					«Ինտերմիլկ» ՀՁ ՍՊԸ	2.01	
11.	«Մանկական շիլաներ»	կգ	39053.4	81.03	«Սլավէքս» ՍՊԸ*	33.61	7
					«Հայր և որդի Երիցյաններ» ՍՊԸ	26.98	
					«Սլավ ֆուդ ինտերնեյշնլ» ՓԲԸ	20.43	
12.	«Մայրական կաթին փոխարինող կերեր»	կգ	152433.4	84.14	«Հայր և որդի Երիցյաններ» ՍՊԸ*	34.49	7
					«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	25.35	
					«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	24.29	

* նշված տնտեսվարող սուբյեկտները տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող

** նշված տնտեսվարող սուբյեկտները տվյալ ապրանքային շուկայում համարվել են գերիշխող դիրք ունեցող՝ իրացման ծավալներով միասին գրավում են ապրանքային շուկայի 1/2-ը կամ 1/3-ը:

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 15 տնտեսվարող սուբյեկտներ: Ըստ իրացման ծավալների՝ այս ապրանքային շուկայում ամենամեծ բաժինն ունի «Լուսակերտի տոհմային թռնչաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 42.49 տոկոս բաժնով: Վերջինս ունի գերիշխող դիրք՝ սկսած 2003 թվականից (39.64 %):

«Թառափազգիներ» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 18 տնտեսվարող սուբյեկտներ: Ընդ որում, 2007 թվականին ձկնատեսակներից կենդանի (թարմ) թառափազգիների ներկրում չի եղել և բնակչության պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է տեղական արտադրության (ձկնաբուծության) հաշվին: Տվյալ ապրանքային շուկայում գերիշխող դիրք են գրավում «Ա.Հովհաննիսյան» ՍՊԸ-ն (38.77%) և «Արթուր Տաթևիկ» ՍՊԸ-ն (33.36%):

«Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 74 տնտեսվարող սուբյեկտներ: Շուկայի մասնակից 55 տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրի բաժինը չի գերազանցում մեկ տոկոսը: 2005 թվականի հետ համեմատ նշված ապրանքային շուկայում իրավիճակը փոխվել է՝ «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն կորցրել է իր գերիշխող դիրքը, իսկ շուկայի մասնակիցների թիվը մոտ երկու անգամ աճել է: Սակայն իրացման ընդհանուր ծավալը 2005 թվականի նկատմամբ նվազել է:

«Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 34 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից 7-ը՝ ներկրող, 27-ը՝ արտադրող: 2007 թվականի ընթացքում հանրապետություն է ներկրվել 264,0 հազ. լիտր, արտադրվել 2958,2 հազ. լիտր և իրացվել 3120,4 հազ. լիտր պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ: Իրացման ծավալում ամենամեծ բաժինն ունի «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ն՝ 57.03%: Շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

«Թթվասեր» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 14 տնտեսվարող սուբյեկտներ: 2007 թվականին 2004 թվականի համեմատ թթվասերի արտադրության և իրացման ծավալները աճել են 2.4 անգամ, իսկ մասնակիցների թիվը պակասել է 21-ով և եթե 2004 թվականին տվյալ ապրանքային շուկան ուներ միջին կենտրոնացվածության աստիճան (CR3 - 60.4 %), ապա 2007 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան (CR3 – 84.7 %): Ամենամեծ բաժինը շուկայում ունի «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ն՝ 59.16%:

«Պաղպաղակ» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 14 տնտեսվարող սուբյեկտներ: 2007 թվականին 2005 թվականի համեմատությամբ պաղպաղակի արտադրության և իրացման ծավալներն աճել են 1.4 անգամ, իսկ արտահանման ծավալը՝ 10.2 անգամ: Ըստ ներկայացված տվյալների՝ 2007 թվականին մեկ շնչի հաշվով տարեկան իրացվել է 0.7 կգ պաղպաղակ, 2005 թվականի 0.5 կգ-ի համեմատությամբ: Իրացման առավել մեծ ծավալներ ունեցող «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ն և «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ն ունեն գերիշխող դիրք և միասին գրավում են 56.55 տոկոս: 2008 թվականի երկրորդ կիսամյակում «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ն տվյալ ապրանքային շուկայում գործունեություն չի իրականացրել:

«Բրինձ» ապրանքային շուկայում 2008 թվականի առաջին կիսամյակում գործել են 18 տնտեսվարող սուբյեկտներ: Շուկայում «Կարի Թով» և «Մոկոնաթ» ՍՊԸ-ներից յուրաքանչյուրը ճանաչվել է գերիշխող դիրք ունեցող: Սակայն երկրորդ կիսամյակում այս սուբյեկտներից մեկը լուծարվել է, իսկ մյուսը տվյալ ապրանքային շուկայում գործունեություն չի իրականացրել:

«Սառեցված ձկներ» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 11 տնտեսվարող սուբյեկտներ: Սառեցված ձկնատեսակների իրացման ծավալը 2007 թվականին կազմել է 366552.9 կգ, գրեթե 12 անգամ պակաս, քան 2005թ. (4725720 կգ): Սակայն մասնակիցների թիվը

գրեթե 3 անգամ աճել է: Ապրանքային շուկայում 2005 թվականին գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտը լուծարվել է և կորցրել իր դիրքը: 2007 թվականին իրացման ծավալում ամենամեծ բաժինն ունի «Սալեքս Գրուպ» ՍՊԸ-ն, որի իրացման ծավալը կազմում է 46.55%: Բնակչության մեկ շնչի հաշվով 2007 թվականին իրացվել է 0.11 կգ սառեցված ձուկ՝ 2005 թվականի 1.73 կգ-ի համեմատ: Սակայն 2008 թվականի ամբողջ ընթացքում նշված տնտեսվարող սուբյեկտը տվյալ ապրանքային շուկայում գործունեություն չի իրականացրել:

«Մանկական հյութեր» ապրանքային շուկայում 2008 թվականի 1-ին կիսամյակում գործել են 3 տնտեսվարող սուբյեկտներ: Ընդ որում, նրանցից երկուսը «Սալեքս Գրուպ» ՍՊԸ-ն (60.6%) և «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ն (36.6%) ունեն գերիշխող դիրք:

«Մանկական խյուսեր (պյուրեներ)» ապրանքային շուկայում 2008 թվականի առաջին կիսամյակում գործել են 4 տնտեսվարող սուբյեկտներ: Ամենամեծ բաժինը տվյալ ապրանքային շուկայում ունի «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ն (68.35%) և գրավում է գերիշխող դիրք:

«Մանկական շիլաներ» ապրանքային շուկայում 2008 թվականի առաջին կիսամյակում գործել են 7 տնտեսվարող սուբյեկտ: Ամենամեծ բաժինը տվյալ ապրանքային շուկայում ունի «Սլավէքս» ՍՊԸ-ն (33.61%) և գրավում է գերիշխող դիրք:

«Մայրական կաթին փոխարինող կերեր» ապրանքային շուկայում 2008 թվականի առաջին կիսամյակում գործել են 7 տնտեսվարող սուբյեկտներ: Ամենամեծ բաժինը տվյալ ապրանքային շուկայում ունի «Հայր և որդի Երիցյաններ» ՍՊԸ-ն (34.49%), որը գրավում է գերիշխող դիրք:

2008 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը և իրացման ծավալներով առաջին երեք տեղերը զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտները (2007 թվականի տվյալներով)

Աղյուսակ 2

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Ապրանքային շուկայի իրացման ծավալը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը	Ապրանքային շուկայում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ (ներ)ի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը
					անվանումը	բաժինը (%)	
1	2	3	4	5	6	7	8
1.	«Հեռուստացույցներ»	հատ	15113	74.0	«Արայ» ՍՊԸ**	30.7	67
					«Փրիթի Ուեյ» ՍՊԸ**	22.3	
					«Զիգզագ» ՍՊԸ	21.0	
2.	«Կենցաղում օգտագործվող լվացքի մեքենաներ»	հատ	26088	58.81	«Փրիթի Ուեյ» ՍՊԸ	27.23	43
					«Արայ» ՍՊԸ	16.48	
					«Զիգզագ» ՍՊԸ	15.10	
3.	«Կենցաղային սառնարաններ»	հատ	16392	49.81	«Արայ» ՍՊԸ	19.53	48
					«Փրիթի Ուեյ» ՍՊԸ	15.25	
					«Զիգզագ» ՍՊԸ	15.03	
4.	«Առևտրային նպատակով օգտագործվող սառնարաններ»	հատ	1847	25.39	«Սիլվի Էյ Ջի» ՍՊԸ	10.83	25
					«Կիֆատո» ՍՊԸ	9.96	
					«Տեխնոմարկետ դիզայն» ՍՊԸ	4.60	
5.	«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)»	կգ	32685989	96.9	«Ազոտինվետս» Ա.Տ.ՓԲԸ***	48.6	4
					«Դվին Հոլդինգ» ՓԲԸ***	32.7	
					«Վայբլ» ՍՊԸ	8.8	
6.	«Տնտեսական օճառ»	կգ	984263.3	88.8	«Մոնա Գրուպ» ՍՊԸ*	46.32	13
					«Ստուգնա» ՍՊԸ	25.66	
					«Սուրհանի» ՍՊԸ	16.82	
7.	«Լվացքի փոշի (ձեռքով լվացքի համար)»	կգ	4392443,7	46.23	«Մոնա Գրուպ» ՍՊԸ	16.49	45
					«Ա.Թորոսյան» ԱՁ	15.16	
					«Պաքսան» ՍՊԸ	14.58	

* նշված տնտեսվարող սուբյեկտը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող

** նշված տնտեսվարող սուբյեկտները տվյալ ապրանքային շուկայում համարվել են գերիշխող դիրք ունեցող՝ իրացման ծավալներով միասին գրավում են ապրանքային շուկայի 1/2-ը կամ 1/3-ը:

*** նշված տնտեսվարող սուբյեկտները հանդիսանում են անձանց խումբ և համարվել են գերիշխող դիրք ունեցող:

«Հեռուստացույցներ» ապրանքային շուկայում 2007 թվականին առաջին կիսամյակում գործել են 67 տնտեսվարող սուբյեկտներ: Տվյալ շուկայում «Արայ» ՍՊԸ-ն (30.7%) և «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն (22.3%) համարվել են գերիշխող դիրք ունեցող. իրացման ծավալներով միասին գրավում են 53.0 տոկոս:

«Կենցաղում օգտագործվող լվացքի մեքենաներ» ապրանքային շուկայում 2007 թվականի առաջին կիսամյակում գործել են 43 տնտեսվարող սուբյեկտ: Շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա:

«Կենցաղային սառնարաններ» ապրանքային շուկայում 2007 թվականի առաջին կիսամյակում գործել են 48 տնտեսվարող սուբյեկտներ: Շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա:

«Առևտրային նպատակով օգտագործվող սառնարաններ» ապրանքային շուկայում 2007 թվականի առաջին կիսամյակում գործել են 25 տնտեսվարող սուբյեկտներ: Շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա:

«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 4 տնտեսվարող սուբյեկտներ: «Ազոտինվեստ» ՓԲԸ-ն և «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ն հանդիսանում են անձանց խումբ և որպես մեկ տնտեսվարող սուբյեկտ համարվել են գերիշխող դիրք ունեցող (81.2 %): Նշված ապրանքային շուկայում արձանագրվել է մասնակիցների կտրուկ նվազում 2002 և 2003 թվականների համեմատ: Սակայն «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ն պահպանել է իր գերիշխող դիրքը:

«Տնտեսական օճառ» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 13 տնտեսվարող սուբյեկտներ: 2004 թվականի համեմատ մասնակիցների թիվը նվազել է երկու անգամ: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտը պահպանել է իր դիրքը: Ամենամեծ բաժինն ունի «Մոնա Գրուպ» ՍՊԸ-ն (46.32%), որին հաջորդում են «Ստուգնա» ՍՊԸ-ն (25.66%) և «Սուրհանի» ՍՊԸ-ն (16.82%):

«Լվացքի փոշի (ձեռքի լվացքի համար)» ապրանքային շուկայում 2007 թվականին գործել են 45 տնտեսվարող սուբյեկտներ: Ամենամեծ բաժինը շուկայում ունի «Մոնա Գրուպ» ՍՊԸ-ն (16.49%): Նրան հաջորդում է «Ա.Թորոսյան» ԱՁ-ն (15.16%), երրորդ տեղում է «Պաքսան» ՍՊԸ-ն (14.58%): «Մոնա Գրուպ» ՍՊԸ-ն 2004 թվականին գրավում էր գերիշխող դիրք, որը 2007 թվականին կորցրել է և այժմ ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա:

2008 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված դեղերի տեսականու մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը և իրացման ծավալներով առաջին երեք տեղերը զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտները

(2007 թվականի և 2008 թվականի առաջին կիսամյակի տվյալներով)

Աղյուսակ 3

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Ապրանքային շուկայի իրացման ծավալը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը	Ապրանքային շուկայում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ (ներ)ի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը
					անվանումը	բաժինը (%)	
1	2	3	4	5	6	7	8
1.	«Անզգայացնող դեղեր»	հ.դրամ	179054.0	45.74	«Վագա Ֆարմ» ՍՊԸ	22.26	23
					«Էս զեթ ֆարմա» ՍՊԸ	12.50	
					«Էլդեքս» ՓԲԸ	10.98	
2.	«Ակնաբուժական դեղեր»	հ.դրամ	353351.4	55.3	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	32.9	25
					«Տոնուս Լես» ՍՊԸ	13.4	
					«Ամիկուս» ՍՊԸ	9.0	
3.	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	հ.դրամ	443504.9	60.1	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ**	31.7	24
					«Ֆարմատեք» ՓԲԸ**	18.9	
					«Արֆարմացիա» ՓԲԸ	9.5	
4.	«Սիրտանոթային դեղեր»	հ.դրամ	1996326.9	59.1	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	38.1	34
					«Արֆարմացիա» ՓԲԸ	14.2	
					«Արմֆարմ» ՍՊԸ	6.8	
5.	«Հակավարակային դեղեր»	հ.դրամ	2038015.1	57.9	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	25.9	32
					«Ֆարմատեք» ՓԲԸ	21.2	
					«Նատալի ֆարմ» ՍՊԸ	10.8	
6.	«Հոգեմետ դեղեր»	հ.դրամ	297132.1	51.6	«Արփիմեդ» ՀՁ ՓԲԸ	19.9	18
					«Արմիկուս» ՍՊԸ	17.3	
					«Նյու Ինտերնեյշնլ Բիզնես ֆարմ» ՍՊԸ	14.4	
7.	«Ստամոքսաղիքային դեղեր»	հ.դրամ	763365.7	50.0	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	25.5	28
					«Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ	12.5	
					«Ամիկուս» ՍՊԸ	12.0	
8.	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	հ.դրամ	124966.2	63.1	«Նյու Ինտերնեյշնլ Բիզնես ֆարմ» ՍՊԸ	33.5	20
					«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	16.9	
					«Արսեմի ԱԱՄ» ՍՊԸ	12.7	
9.	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	հ.դրամ	385790.7	64.9	«Ֆարմատեք» ՓԲԸ*	35.0	25
					«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	17.8	
					«Արմֆարմ» ՍՊԸ	12.1	
10.	«Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ»	հ.դրամ	2035973.5	63.9	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ*	34.4	31
					«Առզո Ֆարմ» ՍՊԸ	16.6	
					«Արֆարմացիա» ՓԲԸ	12.9	

* նշված տնտեսվարող սուբյեկտները տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող

** նշված տնտեսվարող սուբյեկտները տվյալ ապրանքային շուկայում համարվել են գերիշխող դիրք ունեցող՝ իրացման ծավալներով միասին գրավում են ապրանքային շուկայի 1/2-ը կամ 1/3-ը:

Ըստ դեղերի դասակարգման վերը նշված 10 խմբերի, ապրանքատեսակները իրացրել են թվով 57 տնտեսվարող սուբյեկտներ: Ընդ որում, 5 ապրանքային շուկաներում՝ «Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)», «Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ», «Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ», «Սիրտանոթային դեղեր», «Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր» գերիշխող դիրք ունեցող են

համարվել 3 տնտեսվարող սուբյեկտներ: Ընդհանուր առմամբ, դեղերի ուսումնասիրված տեսականու մեջ «Անզգայնացնող դեղեր» ապրանքային շուկան կազմում է 0.97 տոկոս, «Ակնաբուժական դեղեր» ապրանքային շուկան՝ 1.93 տոկոս, «Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր» ապրանքային շուկան՝ 2.42 տոկոս, «Սիրտանոթային դեղեր» ապրանքային շուկան՝ 10.93 տոկոս, «Հակավարակային դեղեր» ապրանքային շուկան՝ 11.10 տոկոս, «Հոգեմետ դեղեր» ապրանքային շուկան՝ 1.62 տոկոս, «Ստամոքսաղիքային դեղեր» ապրանքային շուկան՝ 4.17 տոկոս, «Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ» 0.6 տոկոս, «Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)» ապրանքային շուկան՝ 2.11 տոկոս, «Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ» ապրանքային շուկան՝ 11.13 տոկոս:

գծանկար 1



Գծանկար 1-ում ներկայացված են Հանճնաժողովի կողմից «Հավի ձու՝ կճեպով», «Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ», «Սառեցված ձուկ», «Պաղպաղակ» և «Թթվասեր» ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանի փոփոխությունները: Հատկանշական է, որ միայն «Թթվասեր» ապրանքային շուկայում է բարձրացել կենտրոնացվածության աստիճանը, նշված շուկան միջին կենտրոնացվածից դարձել է բարձր կենտրոնացված:

գծանկար 2



1. «Հավի ձու՝ կճեպով»
2. «Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ»
3. «Սառեցված ձուկ»
4. «Պաղպաղակ»
5. «Թթվասեր»

Գծանկար 2-ում ներկայացված է Հանճնաժողովի կողմից «Հավի ձու՝կճեպով», «Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ», «Սառեցված ձուկ», «Պաղպաղակ» և «Թթվասեր» ապրանքային շուկաների մասնակիցների թվի փոփոխությունը: Համեմատելով 1-ին և 2-րդ գծանկարները, կարելի է փաստել, որ «Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ» ապրանքային շուկայում մասնակիցների թվի կտրուկ աճը բերել է կենտրոնացվածության աստիճանի նվազմանը: Նշված շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտը կորցրել է իր դիրքը:

գծանկար 3



Գծանկար 3-ում ներկայացված է Հանձնաժողովի կողմից 2008 թվականի ընթացքում ուսումնասիրված 29 ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը: Այսպես, 29 ապրանքային շուկաներից ընդամենը մեկն է ցածր կենտրոնացված, 15-ը միջին կենտրոնացված են, իսկ 13-ը՝ բարձր:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հանձնաժողովն իր աշխատանքները նպատակամղել է տնտեսական մրցակցության պաշտպանման և խրախուսման, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախազգուշացման, տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության:

Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից թույլ տված չարաշահումների կանխումն ու հայտնաբերումը հանդիսանում է Հանձնաժողովի կարևոր խնդիրներից մեկը: 2008 թվականին հայտնաբերվել և համապատասխան որոշումներ է կայացվել գերիշխող դիրքը չարաշահող երկու սուբյեկտների վերաբերյալ:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը 2007 թվականի հոկտեմբերի 15-ին «Դվին Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել է հանձնարարության պայմանագիր, որով ընկերությունը պարտավորվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից տրված գյուղական համայնքների ցանկին համապատասխան գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին (կանխավճար ստանալուց հետո) սեփական բազայից մատակարարել 20000 տոննա ամոնիումային սելիտրա՝ մեկ տոննան 84000 դրամով, առանց ԱԱՀ-ի՝ օրենքով սահմանված փաստաթղթերի առկայության դեպքում: Ընդ որում, 74000 դրամը վճարում են գյուղատնտեսական արտադրանք արտադրողները, իսկ 10000 դրամը՝ որպես սուբսիդիա, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

Ընկերությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակներում ազոտական պարարտանյութը 2008 թվականի մարտին իրացրել է մեկ տոննան 84000 դրամով՝ ապահովելով 14,45% շահութաբերություն, իսկ նույն ժամանակահատվածում՝ հողօգտագործողներից բացի, այլ անձանց ազոտական պարարտանյութը իրացրել է մեկ տոննան 111430 դրամով՝ ապահովելով 40,85 % շահութաբերություն, այսինքն, ընկերությունը ազոտական պարարտանյութեր ձեռքբերողների նկատմամբ սահմանել և կիրառել է իրացման չհիմնավորված և խտրական (տարբերակված) գներ (84000 դրամ և 111430 դրամ): Նշված վարքագիծը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և ճանաչվել է տուգանք:

Ունենալով գերիշխող դիրք «Հանրային համակցված հեռախոսացանցի համար վարձակալած գծի ծառայություններ» ապրանքային շուկայում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հանրային համակցված հեռախոսացանցի միջոցով սպառողներին առանց վերավաճառելու իրավունքի մատուցել է բարձր արագությամբ և ցածր գնով ինտերնետ հասանելիության ծառայություն (Հայ-Լայն ծառայություն), սակայն մերժել է լիցենզավորված ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող այլ

ընկերություններին և ցանցի օպերատորներին (պրովայդերներին) նմանատիպ ծառայություններ մատուցել՝ չտրամադրելով նրանց հնարավորություն վարձակալության պայմաններով օգտագործելու հանրային համակցված հեռախոսացանցի այն ենթակառուցվածքը, որն օգտագործում է «Հայ-Լայն» ծառայություն մատուցելու համար: Ընդ որում, պայմանագրային դրույթով սահմանափակել է «Հայ-Լայն» ծառայություն օգտագործողի իրավունքը՝ առաջարկել այդ ծառայությունը «հատուցմամբ կամ անհատույց» երրորդ անձանց կամ այն օգտագործել այլ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու նպատակով: Փաստորեն, ընկերությունը սահմանափակել է այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացումը կամ ներդրումները, պայմանագրի կողմին լրացուցիչ պարտավորություններ է պարտադրել, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ, խոչընդոտել է այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն, ինչպես նաև առաջարկել, կիրառել է այնպիսի պայմաններ, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին: Նշված վարքագիծը Հանճնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և նշանակվել է տուգանք:

Հանճնաժողովի գործունեության առաջնային ուղղություններից է շարունակում մնալ ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից կիրառվող իրացման գնի հիմնավորվածության հարցը: Այդ նպատակով ապրանքային շուկաներում ապրանքների իրացման գների նկատմամբ պարբերաբար դիտանցման իրականացումը և Օրենքի առջև պատասխանատվության զգացումը մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմնորոշեցին նախօրոք դիմել Հանճնաժողով և տեղյակ պահել գների նախատեսվող բարձրացման մասին: Հանճնաժողովը, մասնավորապես, քննության է առել ցեմենտի, գաջի, կերակրի աղի, թթվասերի, պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթի գների նախատեսվող բարձրացումների վերաբերյալ հարցը և որոշել ընդունել ի գիտություն դրանց օբյեկտիվությունը:

Առավել բարդ խնդիր է իրացման գների անհիմն բարձրացման հետ կապված հակամրցակցային համաձայնությունների (համաձայնեցված գործողությունների) կանխարգելումը, ինչպես դա տեղի էր ունեցել 2008 թվականի մայիսին «Սեղմված գազ» ապրանքային շուկայում: Պետության կողմից բնական գազի սուբսիդավորման դադարեցումից հետո, գազալիցքավորման կայաններում 1 խ.մ. գազի գները 130-ից բարձրացել են մինչև 200 դրամ, չնայած, որ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից բնական գազի բացթողնման գինը բարձրացել է ընդամենը 16 դրամով: Հաշվի առնելով ապրանքային շուկայում ստեղծված իրավիճակը, Հանճնաժողովն ընդունեց նախազգուշացնող որոշում, որն էլ ունեցավ իր դրական հետևանքը՝ իրացման գինը 200 դրամից նվազեց մինչև 160 դրամի:

Մեկ այլ դեպքում, ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ընկերության ներկայացրած ավիավառելիքի գնի փոփոխությունը հիմնավորող տեղեկանքի հիման վրա Հանճնաժողովն ընդունելի է համարել ընկերության առաջարկած ձեռքբերման և իրացման գների տարբերությունը (մարժան) և այդ պայմաններում նշված իրացման գինը: Հետագայում ավիավառելիքի համաշխարհային գների

փոփոխության հետ կապված Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն և ընդունել որոշում՝ համաձայն որի, կանոնավոր չվերթներ իրականացնող օդանավերի լիցքավորման նպատակով օդանավակայանի կողմից ավիակերոսինի ձեռքբերման և իրացման գների տարբերության (մարժայի) հաշվարկման համար որոշվել է կիրառել բանաձև, իսկ ոչ կանոնավոր չվերթների դեպքում օդանավակայանին հնարավորություն է տրվել ձևավորել իր գործարար հարաբերությունները, սակայն՝ իրացման գնի ողջամիտ սահմաններում:

Հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի առևտրի մի շարք օբյեկտներում (խանութներում) իրականացված դիտանցումների արդյունքում արձանագրվել են բրնձի իրացման գների ոչ համամասնական փոփոխություններ՝ համեմատած բրնձի համաշխարհային գների փոփոխության հետ. երկարավուն բրինձը վաճառվել է 1 կգ-ը 450-600 դրամով, իսկ կլոր բրինձը՝ 550-900 դրամով: Փաստացի համադրելով միջազգային գները և Հայաստանի Հանրապետություն ներկրվող բրնձի ինվոյսային գները, ինչպես նաև Երևան քաղաքի առևտրի օբյեկտներում իրացվող բրնձի գները պարզվել է, որ առևտրի օբյեկտներում բրինձն իրացվել է ինքնարժեքից մոտ 1,7-2,5 անգամ բարձր գներով: 2007 թվականի հունվարի 1-ից մինչև 2008 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում առավել խոշոր ծավալներով բրինձ ներկրող տնտեսվարող սուբյեկտները հաճախակի փոփոխվել են, շուկա են մուտք գործել խոշոր ներկրման ծավալ ունեցող նոր տնտեսվարող սուբյեկտներ: Բրնձի իրացման գների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը՝ առաջարկելով քննարկել «Բրինձ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող, սակայն վերջին ամիսներին այդ շուկայում գործունեությունը դադարեցրած տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ հարցը: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, իսկ այնուհետև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ստուգումների արդյունքներով գերիշխող դիրք ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներին առաջադրվել է պետական բյուջե վճարել 40.568.100 դրամ:

Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ, դրանց դադարեցման և հետագայում բացառման նպատակով: Ապրանքային շուկաներում իրականացված դիտարկումների և տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմում-բողոքների հիման վրա Հանձնաժողովը հայտնաբերել է մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվող և իրացվող ապրանքների ապրանքային նշանի բառային, գունային և պատկերային համադրությունների ապօրինի օգտագործման փաստեր, ինչը սպառողների մոտ կարող էր առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի առաջարկած հանրահայտ ապրանքի անվանումով ապրանքային նշանի և արտաքին տեսքի նկատմամբ: Դրանք որակվել են որպես տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացում՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորում և օրինազանց տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է տուգանք (հանքային ջրերի, քաղցրավենիքի, սանիտարահիգիենիկ թղթի և ածիկի իրացման, ինչպես նաև ծառայությունների մատուցման ոլորտներում) :

Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ նաև ֆինանսական ծառայությունների մատուցման ոլորտում: Հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորման ընթացքում որոշակի ապահովագրական և գնահատող ընկերությունների նախապատվություն տալու միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք բանկերի կողմից հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների կնքումը (կայացումը) հանդիսացել է որոշակի նպատակաուղղված գործողությունների կամ վարքագծի կիրառում, որոնք հանգեցնում կամ կարող էին հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը: Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հանձնաժողովը նախազգուշացրել է ինը բանկերի՝ հանձնարարելով շտկել և հետագայում բացառել համաձայնեցված գործողությունների (վարքագծի) միջոցով հակամրցակցային համաձայնությունների կնքումը (կայացումը)՝ արտահայտված լրացուցիչ պայմանների սահմանմամբ ապահովագրական ընկերությունների շուկա մուտք գործելուն խոչընդոտելով (շուկա մուտք գործելը սահմանափակելով) կամ շուկայից նրանց դուրս մղելով, ինչպես նաև այնպիսի պայմանների առաջարկմամբ կամ կիրառմամբ, որոնք ապահովագրական և գնահատող ընկերությունների համար առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ:

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղություններից է նաև տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման կարգավորումը: Համակենտրոնացման պետական կարգավորումը նպատակ ունի կանխարգելել մրցակցային իրավիճակի վատթարացումը և բացառել գերիշխող դիրքի չարաշահման հնարավորությունը: 2008 թվականի ընթացքում դիտարկվել է համակենտրոնացման 4 դեպք, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված գործարքները չեն սահմանափակում մրցակցությունը համապատասխան ապրանքային շուկաներում: Հանձնաժողովի որոշումներով համակենտրոնացումները թույլատրվել են:

Հանձնաժողովն իրականացնում է մրցակցության օրենսդրության տեսանկյունից մենաշնորհ կամ օլիգոպոլ տիպի ապրանքային շուկաներում գների դիտանցում և առանձին դեպքերում գնագոյացման վերլուծություն, այդպիսով հնարավորություն ստեղծելով կանխել գերիշխող (մենաշնորհ) դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների չարաշահումները: Մասնավորապես, Հանձնաժողովը 2008 թվականին ընդունել է որոշումներ, որոնցով ապրանքային շուկաներում գործող ինչպես գերիշխող դիրք ունեցող, այնպես էլ մյուս տնտեսվարող սուբյեկտներին նախազգուշացրել է ձեռնպահ մնալ այնպիսի գների սահմանումից և կիրառումից, որոնք կարող են դիտարկվել որպես գերիշխող դիրքի չարաշահում կամ հակամրցակցային համաձայնություն: Այդ նպատակով Հանձնաժողովի կողմից որոշ ապրանքային շուկաներում 2008 թվականին իրականացվել են ապրանքների իրացման գների փոփոխությունների ուսումնասիրություններ, մասնավորապես՝ 2008 թվականի ընթացքում իրականացվել է 32 պարենային ապրանքների մանրածախ գների դիտանցման արդյունքների շարունակական ամենօրյա վերլուծություն, ինչպես նաև ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ ապրանքների իրացման

գների չհիմնավորված բարձրացումը, պահպանումը և չհիմնավորված գների սահմանումը կամ կիրառումը կանխելու և վերացնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները նշված խնդիրների կարգավորման գործում և ստվերի կրճատման նպատակով, Հանձնաժողովն առաջարկել է օրենսդրական փոփոխությունների միջոցով լուծել մի շարք վարչարարական հարցեր՝ ուղղված ապրանքաշրջանառության գործընթացների փաստաթղթային ձևակերպմանը: Խնդիրն առնչվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից ոչ բոլոր գործարքների համապատասխան փաստաթղթերի ձևակերպմանը, ընդունմանը կամ տրամադրմանը: Տվյալ խնդիրն առավել արդիական է դառնում այն ժամանակ, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է չհիմնավորված գների փաստով տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման դեպքերը: Չհիմնավորված գների փաստերի ապացուցման ամբողջ համակարգը կառուցվում է փաստաթղթային շրջանառության թափանցիկության վրա, իսկ դրա ոչ լիարժեքության, խեղաթյուրման դեպքում օրենսդրության խախտման փաստի ապացույցը դառնում է անհնար: Գերիշխող դիրք ունեցող առանձին տնտեսվարող սուբյեկտներ «բարեհաջող կերպով» օգտվում էին գործող օրենսդրության անկատարությունից, ինչն էլ վերջիններիս հնարավորություն էր ընձեռում բացասաբար ազդել շուկայում գների ձևավորման վրա, առանց համապատասխան տնտեսագիտական հիմնավորումների:

Մեկ շնչի հաշվով սննդամթերքի սպառման տվյալների հաշվարկները վկայում են որոշ ապրանքային շուկաներում ստվերի առկայության մասին: Ապրանքային շուկաների վերլուծության տվյալներով տարբեր տարիներին մեկ շնչի հաշվով, տարեկան կտրվածքով, ելնելով տվյալ ապրանքային շուկայի մասնակիցների կողմից ներկայացված իրացման ծավալներից, հանրապետությունում սպառվել է նրբերշիկ և սարդելկա՝ 0.2 կգ, երշիկեղեն՝ 0.8 և 0.9 կգ, մակարոնեղեն՝ 1.7 կգ, պաղպաղակ՝ 0.4, 0.5, 0.7 կգ (ընդ որում, տվյալ դեպքում ընտրված են այն ապրանքները, որոնք չեն արտադրվում գյուղացիական տնտեսություններում):

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում կենտրոնացված գրանցամատյանում գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը (իրացման ծավալը, գինը, ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը և դրանց փոփոխությունները յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով): Նշված տնտեսվարող սուբյեկտների կողմից գործունեության վերաբերյալ ներկայացրած տեղեկատվության վերլուծության արդյունքում հայտնաբերվել են մի շարք ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի կորուստ, ապրանքային շուկայում հնարավոր չհիմնավորված (արհեստական) գնի սահմանում, թերի կամ ոչ հավաստի տեղեկատվություն, «ստվերի» հնարավոր առկայություն և դրանց բացահայտման նպատակով տեղում ստուգում անցկացնելու անհրաժեշտություն:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա Հանձնաժողովի կողմից իրականացվել են որոշ ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ: Մասնավորապես, Հանձնաժողովն ընդունել է «Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման

կարգի և հայտարարագրի ձևի մասին» որոշումը, որով կարգավորվում են համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտների կողմից հայտարարագրի ներկայացման հետ կապված հարաբերությունները: Հանձնաժողովի կողմից ընդունվել և պետական գրանցում է ստացել նաև «Ապրանքային շուկայի սահմանների, սուբյեկտների կազմի և ծավալի որոշման կարգը հաստատելու մասին» որոշումը՝ Օրենքով սահմանված նոր հասկացությունների ու դրույթների հիման վրա շուկայի բնութագրիչների որոշման համար, որի հիման վրա ուժը կորցրած է ճանաչվել Հանձնաժողովի համապատասխան գործող որոշումը:

Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման, ուստի և օրենսդրական հակասությունների առկայության հիմքով ուժը կորցրած են ճանաչվել նաև Հանձնաժողովի կողմից նախկինում ընդունված «Իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված (արհեստական) գնի որոշման կարգը հաստատելու մասին» և «Հակամրցակցային համաձայնությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշումները:

Վարչական վարույթի առավել արդյունավետ իրականացման նպատակով մշակվել և պետական գրանցման է ներկայացվել «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները հաստատելու մասին» որոշումը: Ուժը կորցրած է ճանաչվել նաև տվյալ հարաբերությունները կարգավորող Հանձնաժողովի որոշումը:

2008 թվականի ընթացքում որոշակի լրացումներ և փոփոխություններ կատարվել են նաև Օրենքում: 2008 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունվել է Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների օրենսդրական նախաձեռնության կարգով 2007 թվականին ներկայացված ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որն ուժի մեջ է մտել 2008 թվականի նոյեմբերի 6-ին: Այն սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի ու ստորագրված պայմանագրերի՝ Հանձնաժողովի կողմից փորձաքննության իրականացման, ինչպես նաև շահագրգիռ անձանց՝ Հանձնաժողովի նիստերին մասնակցության վերաբերյալ դրույթներ:

Միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումների ներդրման և կիրառման անհրաժեշտությունը կարևորելով՝ Հանձնաժողովն իր գործունեության մեջ առանձնակի տեղ է հատկացնում միջազգային կապերի ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության սերտացմանը:

Բազմակողմանի համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը ակտիվ մասնակցել է ԱՊՀ անդամ երկրների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատանքներին և վերջինիս կողմից հաստատված ապրանքային շուկաների համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը: Մասնավորապես, «Ավիահաուղևորափոխադրումներ» ապրանքային շուկայում իրականացված ուսումնասիրության արդյունքները ներառվել են «ԱՊՀ անդամ

երկրներում ավիաուղևորափոխադրումների շուկայում մրցակցության իրավիճակի մասին» զեկույցում, որը ներկայացվել է ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդում: Զեկույցում ԱՊՀ անդամ երկների կողմից հաստատվել են նաև ավիաուղևորափոխադրումների շուկայում մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված հետագա միջոցառումները: Մասնակից հինգ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Հանձնաժողովի, կատարած աշխատանքները Խորհրդի կողմից գնահատվել են դրական:

«Համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականություն վարելու մասին» պայմանագրային դրույթներով սահմանված իրավասությունների շրջանակներում Հանձնաժողովի նախաձեռնությամբ Ռուսաստանի Դաշնությունից հրավիրվել է փորձագետ ֆինանսական շուկայում բանկերի կողմից ֆինանսական ծառայությունների մատուցման ոլորտում հարուցված վարչական վարույթի գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության իրականացման և փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Միաժամանակ, համագործակցության շրջանակներում համապատասխան աշխատանքներ են ձեռնարկվել և կատարվել հեռահաղորդակցության ոլորտում, «ցորեն» և «ցեմենտ» ապրանքային շուկաներում համատեղ ուսումնասիրություններին մասնակցելու նպատակով: Այս աշխատանքները շարունակվելու են 2009 թվականի ընթացքում և ուսումնասիրությունների արդյունքները կամփոփվեն Խորհրդի առաջիկա նիստերի քննարկումների ժամանակ:

Միջազգային մրցակցակցության ցանց կազմակերպության (ICN) անդամակցության շրջանակներում Հանձնաժողովը մասնակցել է «Միակողմանի վարքագիծ», «Քարոզչություն», «Մրցակցության մարմինների արդյունավետության գնահատում» աշխատանքային խմբերի ընթացիկ քննարկումներին, որի արդյունքներն ու առաջավոր փորձի մոդելները կքննարկվեն և կներկայացվեն 2009 թվականին Շվեյցարիայի Ժնև քաղաքում կազմակերպվող ICN-ի միջազգային 8-րդ համաժողովի ընթացքում:

Հանձնաժողովը 2008 թվականի ընթացքում շարունակել է համագործակցել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ: Հանձնաժողովը շարունակել է հաշվետու տարում բանակցել իրավասու նախարարությունների և Եվրոպական համապատասխան կառույցների հետ Թվինինգ (TWINING) ծրագրի ներքո մշակված և ներկայացված համատեղ ծրագրերի նախագծերն իրականացնելու նպատակով: Գործողությունների ծրագրի դրույթներով հաստատված Հանձնաժողովի իրավասության շրջանակներում ծառացած պարտավորությունների իրագործման նպատակով Հանձնաժողովը բանակցություններ է վարել Գերմանիայի տեխնիկական համագործակցության (GTZ) ընկերության հետ: Ակնկալվող փորձագիտական օժանդակությունը կնպաստի հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման արդյունավետությանը, փաստացի ապացույցների և ուսումնասիրությունների համար ԵՄ չափանիշներին համապատասխանող մեխանիզմների կիրառմանը:

Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) հետ շարունակվել են աշխատանքները ԵՄ կողմից մշակած համապատասխան հենանիշերի

մեկնաբանության և հնարավոր ներդրման առումով, որոնց առկայությունն անհրաժեշտ է ԵՄ ինտեգրման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ/OSCE) հետ բանակցությունների և իրականացված աշխատանքների արդյունքում հստակեցվել են համագործակցության ընդլայնման ուղղությունները և համատեղ ծրագրերի իրականացման շրջանակը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը բանակցել է Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) հետ տնտեսական մրցակցության պաշտպանության գործընկերության քառամյա ծրագրում ընդգրկվելու համար, ինչը պայմանավորված է Հայաստանում իրականացվող բարեփոխումներով և Հանձնաժողովի առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու նկատառումով:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդել է այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով:

Գլուխ 4. Հանճնաժողովի 2008 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի բյուջեով, որպես Հանճնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս, նախատեսվել է 194756.5 հազար դրամ:

Հանճնաժողովի 2008 թվականի ֆինանսական հաշվետվությունը /ըստ տնտեսագիտական հոդվածների/ ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4
(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	Տարեկան նախահաշիվ	Դրամարկղային ծախս
Ընթացիկ ծախսեր	194756,5	194755,2
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	144598,0	144598,0
-Քաղաքացիական ծառայողների պարգևատրում	5074,1	5074,1
-Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	19450,1	19450,1
-էներգետիկ ծառայություններ	1945,2	1944,7
-Կոմունալ ծառայություններ	198,0	198,0
-Կապի ծառայություններ	8167,8	8167,8
-Ներքին գործուղումներ	111,0	111,0
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	3404,8	3404,8
-Տեղակատվական ծառայություններ	812,4	812,3
-Ներկայացուցչական ծախսեր	500,0	500,0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	201,3	201,3
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2478,5	2478,1
-Գրասենյակային նյութեր և հագուստ	2290,0	2290,0
-Տրանսպորտային նյութեր	5292,0	5291,7
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	210,0	210,0
-Այլ հարկեր	15,0	15,0
-Պարտադիր վճարներ	8,3	8,3

Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում գրանցված տնտեսվարող սուբյեկտների ցանկը

31.12.2008թ. դրությամբ

հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Ապրանքային շուկայի անվանումը	Մասնաբաժինը
1	«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ	Հավի ձու՝ կճեպով	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 42,49 %)
2	«Գրանդ Տոբակո» ՀՋ ՍՊԸ	Ծխախոտ ֆիլտրով	Շուկայի մեկ երրորդից ավելին՝ 50,8 %
		Ծխախոտ առանց ֆիլտրի	Չի հանդիպում էական մրցակցության, 92,3%
3	«Բորոդինո» ՍՊԸ	Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ	Գերիշխող դիրք ունեցող (որպես սպառող գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 45,8%)
4	«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (որպես սպառող գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 41,5%)
5	«Շանթ Պլյուս» ՍՊԸ	Պաղպաղակ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 30.7 %)
6	«Աշտարակ-կաթ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 25,8 %)
	«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	Թթվասեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 59,16 %)
	«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	Պաստերացված և ստերիլիզացված մանրէազերծված կաթ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 57,03 %)
7	«Գեղարդ մսամթերքի կոմբինատ» ՍՊԸ	Մսամթերք	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի 1/3-ից ավելին)
8	«Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ	Շամպայն և փրփրուն գինիներ	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)
9	«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ	Կերակրի աղ	Գերիշխող դիրք ունեցող
		Քարաղ (կերային)	Գերիշխող դիրք ունեցող
		Աղացած աղ (տեխնիկական)	Գերիշխող դիրք ունեցող
10	«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ	Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ	Գերիշխող դիրք ունեցող
11	«Երևանի գարեջուր» ՓԲԸ	Գարեջուր	Գերիշխող դիրք ունեցող
12	««Կոտայք» գարեջրի գործարան» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող
13	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	Խմելու ջուր	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
14	«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
15	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
16	«Նոր-Ակունք» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
17	«Սևան» ՍՊԸ	Ադամաթուզ (բանան)	Գերիշխող դիրք ունեցող
18	«Քեթրին» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող
19	«Վալլետտա» ՍՊԸ	Թեյ	Գերիշխող դիրք ունեցող

20	«Կաֆե դյու Բրազիլ» ՍՊԸ	Սուրճ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 35.2%)
21	«Աղամանդ Կ» ՍՊԸ	Արդյունահանված հանքային ջուր	Գրիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)
22	««Քջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	Շշալցված աղբյուրի ջուր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 44.8%)
23	«ՄԳԱ Վոթքըր» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 42.8%)
24	«Էլիտա» ՍՊԸ	Խմորիչ հացաթխման համար	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 50,41%)
25	«Մառնիկ» ՍՊԸ	Կարագ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 34.9%)
26	«Վաս Գրուպ» ՍՊԸ	Բուսական յուղ / ձեթ/	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով միասին գրավում են շուկայի առնվազն 2/3-ը՝ բնեղեն արտահայտությամբ՝ 70.8 %)
27	«Սալեքս Գրուփ» ՍՊԸ		
28	«Ֆ. Կարապետյան» ԱՁ		
27	«Սալեքս Գրուփ» ՍՊԸ	Էթիլային սպիրտ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին 91 %)
		Շաքարավազ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 91.4%, չի հանդիպում որևէ էական մրցակցության)
		Սառեցրած ձկներ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 46,55 %)
		Ցորենի ալյուր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 42,05 %)
29	«Մանանա Գրեյն» ՍՊԸ	Ցորենի ալյուր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36,77 %)
30	«Կարի Թով» ՍՊԸ	Բրինձ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով միասին գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը՝ 59,6 տոկոսը)
31	«Մոկոնաթ» ՍՊԸ		
32	«Ա.Հովհաննիսյան» ՍՊԸ	Թառափազգիներ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 38,77 %)
33	«Արթուր Տաթևիկ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 33,36 %)
34	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	Մանկական խյուսեր (պյուրեներ)	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 68,35 %)
27	«Սալեքս Գրուփ» ՍՊԸ	Մանկական հյութեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 60,6 %)
34	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36,6 %)

35	«Հայր և որդի Երիցյաններ» ՍՊԸ	Մայրական կաթին փոխարինող կերեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 34,49 %)
36	«Սլավէքս» ՍՊԸ	Մանկական շիլաներ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 33,61 %)
37	«Հեռուստատեքստ» ՍՊԸ	Հեռուստատեքստ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
38	«Դվին Հոլդինգ» ՓԲԸ	Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)	Շուկայի մեկ երրորդից ավելին՝ 81,2%
39	«Ազոտինվեստ» ՓԲԸ		
40	«Մուլտի Լեոն» ՍՊԸ	Երևան քաղաքի սեղմած բնական գազ	Շուկայի մեկ երրորդից ավելին՝ 57,7 %
41	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ	Նատրիումի հիպոքլորիդ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
42	«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ	Օդային երթևեկության սպասարկում (աերոնավիգացիա)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
43	««Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ	Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում	
		Զբաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող գործազուրկների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների՝ «Գործ» համակարգի ձեռքբերում	
44	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից), իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի 100 %
45	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ	Բնական գազ	Գերիշխող դիրք ունեցող
46	«Մոնա Գրուպ» ՍՊԸ	Տնտեսական օճառ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի 1/3-ից ավելին,46.32 %)
47	«Արարատցեմենտ» ՓԲԸ	Ցեմենտ	Գերիշխող դիրք ունեցող
48	«Միկա-ցեմենտ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող
49	«Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ	Լոգանքի միջոցներ	Գերիշխող դիրք ունեցող
50	«ԱրմենՏել» ՓԲԸ	Տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայություն (ինտերնետ հասանելիության համար)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Միջազգային վարձակալված շղթաների ծառայություն ինտերնետ հասանելիության համար	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)

		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական տեղական հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական միջքաղաքային հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական միջազգային հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար վարձակալած գծի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ծառայություն մատուցողի կողմից տեղադրված կամ սպասարկվող հեռախոսային ցանցի հիմնական ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային շարժական փեյջինգ ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ոչ հիմնական ներպետական կամ միջազգային հեռախոսային ծառայություններ (ֆրի ֆոն)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		«Հավաքիր համարը» կամ հավելավճարով ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Տվյալների փոխանցման համար վարձակալած գծերի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող .
51	«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
52	«Գաջեգործ» ՓԲԸ	Գաջ	Գերիշխող դիրք ունեցող
53	«Գաջ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող
54	«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Ուղևորափոխադրող օդանավերի թռիչք-վայրէջքի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բեռնափոխադրող օդանավերի թռիչք-վայրէջքի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ուղևորներին սպասարկող օդանավակայանում յուրաքանչյուր մեկնող ուղևորի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Տելեսկոպիկ կամրջի օգտագործում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բազավորվող և չբազավորվող ավիաընկերության ուղևորատար օդանավերի կայանում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)

		Ուղևորափոխադրող օդանավերի վերգետնյա սպասարկման հիմնական ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բեռնափոխադրող օդանավերի վերգետնյա սպասարկման հիմնական ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բեռնամշակման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ավիավառելիքի լիցքավորման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ավտոմեքենաների կայանում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Օդանավակայանում օդանավին ավտոմեքենայով մոտենալու և թանկարժեք բեռներն անմիջապես օդանավից ընդունելու և առաքելու ծառայություն	Մենաշնորհի դիրք ունեցող (չունի մրցակից)
		Օդանավակայանում բեռնային համալիրի միջոցով բեռների սպասարկում	Մենաշնորհի դիրք ունեցող (չունի մրցակից)
55	«Տիգրան» ՍՊԸ	Երևան-Նոր Խարբերդ և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներ	Գերիշխող դիրք ունեցող
56	«Բագրատուր» ՍՊԸ	«Երևան-Անթալիա(Թուրքիա)-Երևան» ուղղությամբ ավիատոմսերի իրացում	Գերիշխող դիրք ունեցող
57	«Արմինկո» ՍՊԸ	Ինտերնետ ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին)
58	«Բարսել» ՍՊԸ	Բիտում	Գերիշխող դիրք ունեցող
59	«Հայփոստ» ՓԲԸ	Ներպետական նամակագրական թղթակցության ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հեռագրային կապի ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Փոստային կապի և սուրհանդակային ճեպընթաց կապի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
	«Վալլետտա» ՍՊԸ	«Անհատական միակոնտուրանի գազային ջեռուցման կաթսաներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ը՝ 93.37%
60	«Հայկական երկաթուղի» ՓԲԸ	Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Երկաթուղային շարժակազմի շահագործման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Երկաթգծի ենթակառուցվածքի շահագործման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
61	«Գրանդ Սաև» ՍՊԸ	Կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 47.7%)

62	«Քաղ Պետրոլ Սերվիս» Ա/Կ	Բենզին	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 40.4%)
63	«Ֆլեշ» ՍՊԸ	Բենզին	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 44.1%)
		Դիզելային վառելիք	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 38.8%)
64	«Նյու-Շահաք» ՍՊԸ	Քիմիական մաքրման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 40.36%)
65	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	Դեղերի և դեղանյութերի պետական գրանցման համար փորձաքննություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման հավաստագրման համար փորձաքննություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
66	«Գապէքս» ՍՊԸ	«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36.54 %)
67	«Իմեքս Գրուպ» ՍՊԸ,	«Անհատական երկկոնտուրանի գազային ջեռուցման կաթսաներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 50.29%
68	«Բարսիս» ՍՊԸ		
69	«Արմենիա Լադա» ՀՁ/ՓԲԸ,	«Ռուսական արտադրության նոր մարդատար ավտոմեքենաներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 1/3-ը՝ 99.23%
70	«Կարկոմավտո» ՍՊԸ		
71	«Արայ» ՍՊԸ	«Հեռուստացույցներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 30.7 %)
72	«Փրիթի Ուեյ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 22,3 %)
73	«Ֆարմատեք» ՓԲԸ	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 35,0%)
	«Ֆարմատեք» ՓԲԸ	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	Միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը 50,6 %
74	«Ալֆա Ֆարմ» ՍՊԸ		
	«Ալֆա Ֆարմ» ՍՊԸ	«Սիրտանոթային դեղեր»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 38,1%)
		«Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային, հակահոդատապային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 34,4%)
75	«Նյու Ինտերնեյշնլ Բիզնես ֆարմ» ՍՊԸ	«Վարակազերծիչներ և հակաանեխիչ միջոցներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 33,5%)

76	«Միկմետալ» ՓԲԸ	Ամրան	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 28,47%)
77	«Յունիմետխիմ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 22,0%)

նշված տնտեսվարող սուբյեկտները գործում են նաև այլ ապրանքային շուկայում